# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 նոյեմբերի 2024 թվականի N 2532

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՔԱՂԱՔ ՎԱՆԱՁՈՐ ՄԻՉՈՒՐԻՆԻ 36 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՈՍ ՍԱՐԳՍԻ ԲԵԿՉՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սոս Սարգսի Բեկչյանի լիազորված անձ Գայանե Անդրանիկի Հակոբյանի 11.12.2023 թվականի թիվ 02.21983 դիմումը, 08.11.2023 թվականի թիվ 6974 լիազորագիրը (նոտարական ակտի կոդը: /843-20231114-67-7471917/, 29.03.2011 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1139 վկայագիրը, 05.09.1986 թվականի տրված տեխնիկական անձնագիրը ,հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, «Գուգարաց աշխարհ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, 07.12.2023 թվականին տրված Հաշվառման /չափագրման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023TCZYJN), «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ 72/24ե եզրակացությունը,և հաշվի առնելով այն, որ Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Միչուրինի 36 հասցեում կառուցած բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 330 քմ և դրան կից 5 քմ մակերեսներով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1958-1997 թթ բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 335 քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Սոս Սարգսի Բեկչյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Միչուրինի 36 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 330 քմ և դրան կից 5 քմ մակերեսով հողամասի նկատմամբ:
2. Ճանաչել Սոս Սարգսի Բեկչյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Միչուրինի 36 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 335քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ համայնք Վանաձոր Վանաձոր ք. Ի. Միչուրինի փողոց, 36 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. նոյեմբերի 18
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 նոյեմբերի 2024 թվականի N 2533

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2206 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անուշ Սուրիկի Աշուղյանի (ծնված՝ 13.08.1969թ.) լիազորված անձ՝ Գարիկ Ռուբիկի Աշուղյանի դիմումը, 21.06.2024թ. թիվ 3696 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 741-20240621-90-8056327), Վանաձոր համայնքի ղեկավարի 12 սեպտեմբերի 2024 թվականի թիվ 2206 որոշումը, 25.06.2024թ. ՀՀ կադաստրի կոմիտեի թիվ ՍS-25062024-06-1235 տեղեկանքը, ՀՀ կադաստրի կոմիտեի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 01.10.2024թվականի թիվ Կ-01102024-06-0225 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 12 սեպտեմբերի 2024 թվականի «Վանաձոր համայնքի գյուղ Գուգարքում գտնվող, Անուշ Սուրիկի Աշուղյանին պատկանող հողամասի ճշտված սահմանները հաստատելու, հողամասի գործառնական նշանակությունը փոխելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 2206 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1.Որոշման 1-ին կետում «սեփականության իրավունքով» բառերը փոխարինել « (04.10.2005թ. «ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին թիվ 199-Ն օրենքի 23-րդ հոդվածով սահմանված /պայմանական/ սեփականության իրավունքով) »:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. նոյեմբերի 18
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 նոյեմբերի 2024 թվականի N 2534

### ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 22 ՀՈՒԼԻՍԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1063 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արայիկ Սամվելի Գյոկչյանի լիազորված անձ Արթուր Սամվելի Գևորգյանի 10.10.2023 թվականի թիվ 17446 դիմումը, 24.08.2023թվականի 24 ԱԱ 4993649 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ; 741-20230919-67-7305174) ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1.Ուժը կորցրած ճանաչել Վանաձորի քաղաքապետի 22 հուլիսի 2008 թվականի «Վանաձոր քաղաքի Աղայան փողոցի թիվ 59Ա-3 ավտոտնակ հասցեում գտնվող հողամասի հողհատկացման հիմքերը վերականգնելու և Արայիկ Գյոկչյանին հողամաս վերահատկացնելու մասին» թիվ 1063 որոշումը՝ լուծելով 2008 թվականի հուլիսի 31-ին համայնքային սեփականության հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին (մրցույթով) թիվ 585 պայմանագիրը:

2.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ կատարել Վանաձոր քաղաքիԱղայան փողոց, թիվ 59Ա-3 հասցեում գտնվող հողամասի վճարների վերահաշվարկ և վերջնահաշվարկ:

3.Վանաձերի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության անձնակազմի կառավարման բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը ուղարկել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. նոյեմբերի 18
ք.Վանաձոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

18 նոյեմբերի 2024 թվականի N 2535

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 06 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2495 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 06 նոյեմբերի 2024 թվականի թիվ 2495 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 06 նոյեմբերի 2024 թվականի «Վանաձոր քաղաքի Նաիրի փողոց թիվ 5 (պայմանական) հասցեի բնակելի տան ու հողամասի նկատմամբ Լյուդմիլա Վարդգեսի Ներսիսյանի սեփականության իրավունքը ճանաչելու, հողամասի գործառնական նշանակությունը փոխելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 2495 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1.Որոշման վերնագրում, նախաբանում և 1-ին կետում «Ներսիսյանի» բառը փոխարինել «Ներսեսյանի» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. նոյեմբերի 18
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 նոյեմբերի 2024 թվականի N 2536

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի «ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 1772 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հաստատված եռամսյակային բաշխումները և հաշվի առնելով գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման առարկաների բնութագրերի նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2017թ ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածով՝ ***որոշում եմ.***

1.Վանաձոր համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 11-ի «Վանաձոր համայնքի ղեկավարի 2024 թվականի գնումների պլանը հաստատելու մասին» թիվ 1772 որոշման հավելվածում կատարել լրացում՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ · ВАНАДЗОР МУНИЦИПАЛИТЕТ · VANADZOR MUNICIPALITY · *06967534*

2024թ նոյեմբերի 18
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 նոյեմբերի 2024 թվականի N 2537

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Պ. ՍԵՎԱԿԻ ՓՈՂ ԹԻՎ 39Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էլիկ Հովհաննեսի Մեսրոպյանի 27.08.2024 թվականի թիվ 14617 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1894174 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 23.08.2024 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 5354 վկայագիրը (նոտարական ակտի կոդը:741-20240822-84-8261496), 23.08.2024 թվականի սեփականության իրավունքի թիվ 5353 վկայագիրը (նոտարակամ ակտի կոդը:741-20240822-84-8261906), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Պ. Սևակի փող թիվ 39ա հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Պ. Սևակի փողոց, 39/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ նոյեմբերի 18
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 նոյեմբերի 2024 թվականի N 2538

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 22-Ի ԹԻՎ CPP0-0001-3054 ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ), 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 03-Ի ԹԻՎ CPP0-0001-3270 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հակոբ Մայիլյանի դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 2024 թվականի մայիսի 22-ի թիվ CPP0-0001-3054 նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանք) և 2024 թվականի հունիսի 03-ի թիվ CPP0-0001-3270 շինարարության թույլտվությունը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 2024 թվականի մայիսի 22-ի թիվ CPP0-0001-3054 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք), 2024 թվականի հունիսի 03-ի թիվ CPP0-0001-3270 շինարարության թույլտվության մեջ կատարել հետևյալ լրացումը.

1.Վանաձոր համայնքի ղեկավարի 2024 թվականի մայիսի 22-ի թիվ CPP0-0001-3054 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) մեջ «տաղավար» բառից հետո լրացնել «Մարզ Լոռի, համայնք Վանաձոր Վանաձոր ք. Տարոն-2 ՔՇՀ-3 թաղամաս 1/1 հողամաս,» բառերը:

2.Վանաձոր համայնքի ղեկավարի 2024 թվականի հունիսի 03-ի թիվ CPP0-0001-3270 շինարարության թույլտվության մեջ «տաղավար» բառից հետո լրացնել «Մարզ Լոռի, համայնք Վանաձոր Վանաձոր ք. Տարոն-2 ՔՇՀ-3 թաղամաս 1/1 հողամաս,» բառերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ նոյեմբերի 18
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 նոյեմբերի 2024 թվականի N 2539

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 10 ՇԵՆՔԻ ԲԱԿՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանիկ Հայկի Միտիչյանի 24.08.2023թ. թիվ 14474 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 17.08.2023թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (ծածկագիր: 2023MHT3ET), 05.11.2024թ. «Ռիգ» ՆԱ ԱՁ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ 21գ.-001123 եզրակացությունը, 13.05.2024թ. 29.11.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 46 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ *որոշում եմ.*

1.Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Ներսիսյան նրբանցք թիվ 10 շենքի բակում ինքնակամ կառուցված,ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 51,36քմ արտաքին մակերեսով (ներքին մակերես 45.6քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 41.1քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2.Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու

սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

5. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Ներսիսյան նրբանցք թիվ 10 շենքի բակում գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք Վանաձոր ք., Հ. Ներսիսյան փողոց, 1-ին նրբանցք, 10/3 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ նոյեմբերի 18
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 նոյեմբերի 2024 թվականի N 2540

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 02 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2252 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 02 հոկտեմբերի 2024 թվականի թիվ 2252 որոշումը ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին», ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 02 հոկտեմբերի 2024 թվականի «Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Շինարարների փողոց թիվ 5/2 շենքի հյուսիսային մասում ինքնակամ կառուցված մետաղական ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչելու, ավտոտնակը օրինականացնելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 2252 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Որոշման վերնագրից, 1-ին, 3-րդ և 4-րդ կետերից հանել «մետաղական» բառը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ նոյեմբերի 18
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

18 նոյեմբերի 2024 թվականի N 2541

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Մ. ԳՈՐԿԻ ՓՈՂՈՑ 2/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԼՅՈՒԴՎԻԿ ՍԵԴՐԱԿԻ ԶԱՔԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լյուդվիկ Սեդրակի Զաքարյանի 19.02.2023 թվականի թիվ 02/3583 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 17102024-06-0055 վկայականը, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1.Վանաձոր քաղաքի Մ. Գորկի փողոց 2/1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 29.5քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 29.4քմ) ավտոտնակը 111300 (հարյուր տասնմեկ հազար երեք հարյուր) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 29.5քմ մակերեսով(ներքին մակերեսը՝ 29.4քմ) հողամասը 734300 (յոթ հարյուր երեսունչորս հազար երեք հարյուր) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Լյուդվիկ Սեդրակի Զաքարյանին:

2.Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Լյուդվիկ Սեդրակի Զաքարյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ նոյեմբերի 18
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 նոյեմբերի 2024 թվականի N 2542

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄԱՆՈՒՇՅԱՆ ՓՈՂՈՑ 1/3 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արտուշ Հրաչիկի Գալստյանի 09.11.2023թ. թիվ 02/19644 դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 29.11.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 46 որոշումը, 18.12.2023թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-473/23 Ի եզրակացությունը, ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի 06.09.2023 թվականին տրված տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023VGCDGH), հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^{3}$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով,ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Փոխել Վանաձոր քաղաքի Մանուշյան փողոց 1/3 հասցեն կից ինքնակամ կառուցված բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 0.0077 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի խառը կառուցապատման հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:

2.Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Մանուշյան փողոց 1/3 հասցեն կից գտնվող ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 78.7 քմ ընդհանուր մակերեսով բնակելի նշանակության շինությունները , և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով

սահմանված հողամասերի թվին չդասվող 0.0077 հա մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

3. 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 2-րդ կետում նշված ինքնակամ կառուցված շինությունների և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնին՝ սույն որոշման 2-րդ կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 2-րդ կետում նշված շինությունների ինքնակամ կառուցումը իրականացրած անձին շինությունները և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

5. Սույն որոշման 2-րդ կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք Վանաձոր ք., Մ. Մանուչյան փողոց, 1/15 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ նոյեմբերի 18
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

19 նոյեմբերի 2024 թվականի N 2543

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔ 12-ՐԴ ՓՈՂՈՑ 42 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՄԵՐՈՒԺԱՆ ՌԱԶՄԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մերուժան Ռազմիկի Հարությունյանի 25.10.2024 թվականի թիվ 02/18054 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 21102024-06-0069 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, «ԱՐՍԵՆ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1.Տարանջատել Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք, 12-րդ փողոց, 42 հասցեում գտնվող, Մերուժան Ռազմիկի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասը և դրա վրա գտնվող շինությունները՝ համաձայն «ԱՐՍԵՆ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված թիվ 1 և թիվ 2 հատակագծերի:

2.Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք, 12-րդ փողոց, 42 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա.0.100148հա մակերեսով հողամասին և նրա վրա գտնվող բնակելի նշանակության շինություններին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք, 12-րդ փողոց, 42 բնակելի տուն:

բ.0.041817հա մակերեսով հողամասին և նրա վրա գտնվող բնակելի նշանակության շինություններին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք, 12-րդ փողոց, 42/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. նոյեմբերի 19
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 նոյեմբերի 2024 թվականի N 2544

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով՝ որոշում եմ.

1.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի,արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 2.3-15) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2024 թվականի դեկտեմբերի 20-ին անցկացնել մրցույթ

2.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի,արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 2.3-17) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2024 թվականի դեկտեմբերի 20-ին անցկացնել մրցույթ

3.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 2.3-21) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2024 թվականի դեկտեմբերի 20-ին անցկացնել մրցույթ

4.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի սպասարկման և տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 2.3-33) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2024 թվականի դեկտեմբերի 20-ին անցկացնել մրցույթ

5.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի հանրային կապերի, լրատվության բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 2.3-39) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2024 թվականի դեկտեմբերի 20-ին անցկացնել մրցույթ

6. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 2.3-44) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2024 թվականի դեկտեմբերի 20-ին անցկացնել մրցույթ

7.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և տուրիզմի հարցերի բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 2.3-18) համայնքային ծառայության

թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2024 թվականի դեկտեմբերի 24-ին անցկացնել մրցույթ

8. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 2.3-19) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2024 թվականի դեկտեմբերի 24-ին անցկացնել մրցույթ

9. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի սպասարկման և տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 2.3-32) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2024 թվականի դեկտեմբերի 24-ին անցկացնել մրցույթ

10. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-սոցիալական աշխատող (ծածկագիր՝ 2.3-43) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2024 թվականի դեկտեմբերի 24-ին անցկացնել մրցույթ

11. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 2.345) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2024 թվականի դեկտեմբերի 24-ին անցկացնել մրցույթ

12. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 2.3-46) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2024 թվականի դեկտեմբերի 24-ին անցկացնել մրցույթ

15. Մրցույթների անցկացման մասին հայտարարությունը հրապարակել http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

16. Սույն որոշման մասին երկօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմին:

17. Հաստատել մրցույթների հայտարարության տեքստը՝ համաձայն հավելված 1 և հավելված 2-ի:

18. Լիազորված անձ նշանակել Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Հ. Վիրաբյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. նոյեմբերի 19
ք.Վանաձոր